

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՑԱՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

/Լիակատար /ամբողջական/ գիտելիքների ուսուցման տեխնոլոգիա/*

Աննա Պետրոսյան

Հայտնի է, որ հասարակությունը ստեղծում է իր բնույթին ու սոցիալական զարգացումներին համապատասխան կրթական համակարգ և կրթության մեջ արտացոլվում են տվյալ պատմական ժամանակաշրջանի հասարակության հիմնախնդիրները:

Արցախի, ինչպես նաև Հայաստանի, Ռուսաստանի, արտասահմանյան շատ դպրոցներ ունեն բավականին հիմնախնդիրներ:

Արցախում, ճիշտ է, բարվոք է դպրոցի նյութատեխնիկական բազան, սակայն կան հանգամանքներ, որոնք լուրջ խոչընդոտներ են կրթական բարեփոխումների իրականացման ճանապարհին: Դրանցից կարևորում ենք՝

- նախադպրոցական հաստատությունների քիչ լինելը,

- կրթության բովանդակային նորմատիվային փաստաթղթերի ամենամյա փոփոխությունները,

- համակազմ դասարանների առկայությունը,

- ԲՈՒՀ-երում մանկավարժական կադրերի որակավորումը /մանկավարժական կրթությունը դարձել է «ոչ էլիտար»/:

Այսօր՝ դեպի տեղեկատվական հասարակություն անցման այս փուլում, անչափ կարևորվում է կրթական քաղաքականության ճշգրտման ու մշակման խնդիրը: Խնդիր, որի լուծման ճանապարհին ստեղծվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ու կատարելագործման բազմաթիվ ձևեր ու մոդելներ, ինտենսիվորեն զարգանում են բազմաթիվ կրթական տեխնոլոգիաներ և ուղղություններ, որոնց դրույթների կիրառությունը դպրոցներում անհրաժեշտություն է:

Մենք ուզում ենք ուշադրություն դարձնել Արցախի հանրակրթական դպրոցներում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մանավանդ՝ Լիակատար (ամբողջական) գիտելիքների յուրացման տեխնոլոգիայի կիրառման գործընթացին:

Այս տեխնոլոգիայի հեղինակներն են ամերիկացի գիտնական-մանկավարժներ Զ. Քերոլը և Բ. Բլումը: Ռուսական մանկավարժության մեջ այս տեխնոլոգիայի հանգամանակից նկարագրությունը տալիս է Մ. Վ. Կլարինը [6]: Լիակատար (ամբողջական) գիտելիքների յուրացման տեխնոլոգիան տարբերվում է ավանդականից (դաս-դասարանային համակարգից) իր վերջնարդյունքով: Դաս-դասարանային համակարգի դեպքում բոլոր սովորողներին միևնույն ժամանակահատվածում կատարելու և յուրացնելու համար տրվում նյութի նույն բովանդակությունը և ծավալը: Ստացվում են բավական տարբեր և ոչ միանշանակ արդյունքներ: Սովորողների մի մասը լավ է յուրացնում նյութը, մյուսները՝ վատ, իսկ ոմանք էլ տեղեկության մի մասն ընդհանրապես չեն յուրացնում, այսինքն՝ գիտելիքների յուրացման աստիճանը տարբեր է:

Լիակատար յուրացման տեխնոլոգիան տալիս է բովանդակային նույն նյութը, դրա հետևանքով նույն կարողությունների և հմտությունների ձեռքբերումն է նախատեսում,

* Հոդվածն ընդունվել է 16.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սակայն յուրաքանչյուր դպրոցականի համար նախատեսում է անհատական ժամանակային փուլ, մեթոդներ, ձևեր, աշխատանքային պայմաններ [6]:

Այս տեխնոլոգիայի բնորոշ գիծը ուսուցման պլանավորված արդյունքներն են: Դա լիակատար յուրացման չափանիշն է: Չափանիշը տրվում է ընդհանրացված, միավորված տեսքով՝ նպատակների աստիճանակարգի օգնությամբ, այսինքն՝ մանկավարժական նպատակների փոխկապակցված աստիճանավորման սկզբունքով, որոնք մշակված են մտածողական, զգայական և հոգեշարժողական ոլորտների համար:

Ուսուցիչը պարտավոր է սովորողներին հասցնել ուսումնական նյութի բովանդակության պլանավորված ցուցանիշները: Նա որոշում է նախատեսվող գործունեության նպատակները, որոշակի գործողությունները և գործառնությունները, որոնք պիտի իրականացնի սովորողը, որ հասնի չափանիշին: Ճանաչողական գործունեության նպատակները վերաբերում են՝

- գիտելիքին (սովորողը մտապահեց, վերարտադրեց, ճանաչեց)
- ընկալմանը (սովորողը բացատրում է, ցույց է տալիս, մեկնաբանում է)
- կիրառում (սովորողը կիրառում է սովորած նյութը որոշակի պայմաններում և նոր իրադրության մեջ)

• ընդհանրացում և համակարգում (սովորողը ամբողջից առանձնացնում է մասերը, ձևավորում է նոր ամբողջություն)

• գնահատում (սովորողը որոշում է ուսուցման օբյեկտի նշանակությունը և արժեքը) [1]:

Այս տեխնոլոգիայում ուսումնական նյութի նախապատրաստում ասելով պիտի հասկանալ, որ ուսումնական նյութի ողջ բովանդակությունը բաժանվում է առանձին ուսումնական միավորների (տարբեր հեղինակների մոտ՝ կամ ուսումնական տարրերի, կամ բովանդակային միավորների, կամ փոքր բլոկների): Ուսումնական միավորները ավարտուն իմաստ ունեն (իմաստային ամբողջություն), ծավալով էլ ընդարձակ չեն՝ 3-6 դասանյութ: Ամեն մի միավորի յուրացումը ստուգվում է հատուկ թեստի (ստուգողական աշխատանք) միջոցով, որը գնահատվում է երկաստիճան համակարգով՝ ստուգված կամ չստուգված: Ուսումնական ամեն մի միավորի համար մշակվում է կորեկցիոն-շտկողական դիդակտիկ նյութ, որը չյուրացրածը և բացթողումները շտկելու համար նախատեսվում է: Այս լրացուցիչ նյութերը տարբերվում են նախապես տրվածներից. սրանք սովորողին ընտրության հնարավորություն են տալիս ընկալելու, իմաստավորելու և մտապահելու համար առավել անհատական միջոցներ և ձևեր: Ամբողջ թեմայի համար մշակվում է լիակատար յուրացման որոշակի չափանիշ: Այսօրինակ աշխատանք կատարելու համար սովորողները նախօրոք պետք է որոշակի պատրաստականություն ունենան: Սովորողների կողմնորոշումը նպատակ ունի խթանելու դասարանի համատեղ աշխատանքը ուսուցչի հետ պայմանավորվածության համաձայն և բացատրել նման ուսուցման հիմնական սկզբունքները: Թեմայի (ենթաբաժնի, դասընթացի) յուրացման գնահատականը նշվում է ըստ չափանիշի կամ էտալոնի, որը նախօրոք տրամադրվել էր աշակերտներին:

Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր սովորողի ուսուցչին անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս, տալիս է բացատրություններ, ինչպես նաև սատարում և խրախուսում է ամեն մեկին առանձին-առանձին: Դժվարանալու դեպքում սովորողին տրվում են այլընտրանքային միջոցներ դրանք հաղթահարելու համար:

Ուսուցչի գործունեությունն այս տեխնոլոգիայի շրջանակներում նախատեսում է հետևյալը՝

- ծանոթություն ուսումնական նպատակներին.

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

- ուսուցման ընդհանուր պլանի բացատրություն.
- նոր նյութի ներկայացում և շարադրում (կատարվում է ավանդական եղանակով).
- ընթացիկ ստուգման կազմակերպում.
- ընթացիկ արդյունքների գնահատում.
- կորեկցիոն-շտկողական աշխատանք այն սովորողների հետ, ովքեր լիովին չեն յուրացրել նյութը.

- փոխօգնության փոքր խմբերի ձևավորում և կազմակերպում.
- օգնության ստացած սովորողների կրկնակի թեստավորում:

Նման ձևով աշխատելուց հետո թեստային առաջադրանքով ստուգվում և գնահատվում է ամեն մի աշակերտի կողմից ողջ դասընթացի յուրացումը:

Գիտելիքների ամբողջական յուրացման տեխնոլոգիայի դրույթների կիրառման գործընթացի համաձայն ստորև ներկայացվածը մշտադիտարկումների արդյունք է:

«Ժողովուրդն իմաստուն է» թեմայի ուսուցում /Մայրենի 3/ [3]:

1. «Թագավորը, նագիրը և վեգիրը» 1 ժամ
2. Եզոպոս «Հնարամիտը» 3 ժամ
3. Հովսեփ Ասորի «Երկու աքլոր» 2 ժամ

Ընդամենը 21 ժամ, որից ուսուցանվելու է 6 -ը /4 թեմա/: Դասարանը բաժանվում է 4 խմբի:

ԽՈՒՄԲԸ				
ԴԱՍ	առաջին	երկրորդ	երրորդ	չորրորդ
դաս 1	«Թագավորը, նագիրը և վեգիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
դաս 2	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	«Թագավորը, նագիրը և վեգիրը»
դաս 3	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	Թագավորը, նագիրը և վեգիրը	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս
դաս 4	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	«Թագավորը, նագիրը և վեգիրը»	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս
դաս 5	Լեզվական և այլ բնույթի աշխատանքներ	Լեզվական և այլ բնույթի աշխատանքներ	Լեզվական և այլ բնույթի աշխատանքներ	Լեզվական և այլ բնույթի աշխատանքներ
դաս 6	Իրադրությունային խաղեր, առակների բեմականացում	Իրադրությունային խաղեր, առակների բեմականացում	Իրադրությունային խաղեր, առակների բեմականացում	Իրադրությունային խաղեր, առակների բեմականացում

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դաս առաջին

Հարց	«Թագավորը, նագիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլորը»
1.	Ովքե՞ր էին սոված- ծարավ թափառում անտառում:	Ի՞նչ էր Եզոպոսի տերը և որտե՞ղ էր գնացել նա:	Ի՞նչ էր կատարվել կեսօրին ծովափին:	Աչերը՞ կռվեցին:
2.	Ինչի՞ հանդիպեցին նրանք:	Ի՞նչ տեսավ հյուրերից մեկը և ի՞նչ հարցրեց Քսանթոսին:	Ի՞նչ խորհուրդ տվեց Եզոպոսը Քսանթոսին:	Ի՞նչ արեց պարտված աքլորը:
3.	Ներս մտնելով նրանք ի՞նչ տեսան:	Ինչպե՞ս հոխորտաց Քսանթոսը:	Ինչպե՞ս դիմեց ժողովրդին Քսանթոսը:	Իսկ ի՞նչ արեց հաղթող աքլորը:
4.	Ի՞նչ արեց թագավորը:	Քսանթոսը և հյուրը ինչու՞ հանեցին իրենց մատանիները:	Ինչու՞ հիացավ ժողովուրդը:	Ի՞նչը նկատեց պարծենկոտին և ի՞նչ եղավ:
5.	Ինչպե՞ս նագիրը բաժանեց ուտելիքը:			
6.	Ի՞նչ արեց թագավորը:	Ի՞նչ պատասխանեց Եզոպոսը:		
7.	Ինչպե՞ս վեզիրը բաժանեց ուտելիքը:	Քսանթոսը ի՞նչ առաջարկեց Եզոպոսին:		
8.	Ի՞նչ հարցրեց թագավորը:			
9.	Ի՞նչ պատասխանեց վեզիրը:			

Դաս երկրորդ

Հարցը	«Թագավորը, նագիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլորը»
Ովքե՞ր են ստեղծագործության հերոսները				
Ի՞նչ միջավայրում է տեղի ունենում դեպքը				
Ասել հենակետային բառերը և կազմել պլան				
Ստեղծագործության նպատակները				
Ստեղծագործության խնդիրները				
Ստեղծագործության հիմնական միտքը				

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ստեղծագործության ենթատեքստը				
-----------------------------	--	--	--	--

Ղաա երրորդ

Հարցը	«Թագավորը, նագիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Ինչպե՞ս ծնվեց առակը:				
Ովքե՞ր են առակի հերոսները:				
Առակի ո՞ր մասն է ամենակարևորը: Ինչու՞:				
Ինչու՞ անհասկանալի կլինի առակի վերջին մասը:				
Պատմի՞ր՝ ըստ կազմված պլանի, առաջին դեմքով:				
Ասել համապատասխան առած-ասացվածքներ				

Ղաա չորրորդ

Հարցը	«Թագավորը, նագիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Լեզվական և այլ բնույթի աշխատանքներ				

Ղաա հիգերորդ

Հարցը	«Թագավորը, նագիրը և վեզիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Իրադրությունային խաղեր, առակների բեմականացում				

Ղաա վեցերորդ

Հարցը	«Թագավորը, նագիրը և վեգիրը»	Եզոպոս «Հնարամիտը» Առաջին մաս	Եզոպոս «Հնարամիտը» Երկրորդ մաս	Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»
Ամփոփում				

Մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նման ձևով կարելի է վարել առակների, հեքիաթների, ինչպես նաև երեխաների համար մատչելի, փոքրածավալ գեղարվեստական նյութերի ուսուցման դասերը:

Ղաասագործընթացում անհրաժեշտ է մեծ կարևորություն տալ ուսուցչի կողմից դասանպատակների հստակեցմանը, շտկողական աշխատանքներին այն սովորողների հետ, ովքեր լիովին չեն յուրացրել նյութը, ընթացիկ ստուգման կազմակերպմանը, արդյունքների գնահատմանը: Ընթացիկ ուսուցանող գնահատումը պետք է կատարել ըստ գնահատման նոր հայեցակարգի [5], որի համաձայն՝ աշակերտները գնահատվում են ոչ թե միավորներով /«10», «9», «8», «7», «6», «5» և այլն, այլ բառային բնութագրիչներով:

Մենք չենք անդրադարձնում գնահատմանը, քանի որ մեր խնդիրը դա չէ: Այնուամենայնիվ, կբերենք ուսուցանող գնահատման մի օրինակ. եթե աշակերտի պատասխանը բավարարում է «9» միավորի, ապա բավարարում է նաև ստորև բերված բառային բնութագրիչներին, և կարելի է նրան ասել՝

դու ապահովում ես սահուն, վարժ ընթերցանություն ամբողջական բառերով՝ բառակապակցությունների և բառերի խմբերի իմաստների ընկալմամբ: Պահպանում ես կարողալու ճիշտ առոգանությունը, առանձնացնում իմաստային դադարները:

Կարողանում ես տեքստը բաժանել իմաստային մասերի, գտնել տեքստի հիմնական գաղափարն արտահայտող պարբերությունը: Առանձնացնում ես հերոսներին և նրանց բնութագրող բառերն ու արտահայտչամիջոցները: Տալիս ես նորածանոթ բառերի բացատրությունը, օգտագործում խոսքի մեջ: Ուսուցչի օգնությամբ կազմում ես տեքստի այլանը:

Պահանջվող ձևով ճշտորեն վերարտադրում ես կարդացածի բովանդակությունը՝ օգտագործելով նոր սովորած բառերը, պահպանելով շարադրանքի տրամաբանական հաջորդականությունը, օգտագործելով արտահայտչամիջոցները (առանց անվանելու դրանք): Հերոսների վարքագծի նկատմամբ դրսևորում ես վերաբերմունք, սակայն չես կարողանում հիմնավորել:

Պայմանավորված մեր աշխատանքի բնույթով /պետական տեսուչ/՝ վերը նշված ձևով դիտարկումներ ենք իրականացրել Արցախի տարբեր դպրոցներում: Մեր նպատակն էր տեսնել՝ ինչքանով է նման դասավանդումը նպաստում կրթության իրականացմանը: Պարզվել է, որ աշակերտների մեծամասնությունը շատ կարճ ժամանակահատվածում ձեռք է բերում ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ և արագ ընթերցողական կարողություններ, կարդացածը վերարտադրելով, վերլուծելով, քննադատելով և ստեղծագործելով պատմելու հմտություններ, քերականական և գրականագիտական գիտելիքներ, քննադատական և տարածական մտածողություն, զարգանում են աշակերտի ինքնուրույն-որոնողական, ստեղծագործական, ճանաչողական, հաղորդակցական, համագործակցելու ընդունակությունները, նրա արժեքային համա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

կարգը: Իսկ իրադրությունային խաղերի միջոցով աշակերտը կարողանում է տվյալ, նույնիսկ ոչ ստանդարտ իրավիճակներից դուրս գալու հնարներ գտնել:

Նույնիսկ ամենաթույլ սովորող աշակերտն ինքնահաստատման որակների ձեռքբերմամբ կարողանում է նաև ինքնադրստորման հատկանիշներ ցուցաբերել և հասկանալ կարդացածն ու արտահայտվել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պետրոսյան Հ. Հ.«Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ», մոդուլային ուսումնական ձեռնարկ, Եր., ԱՆ-ՁՈՆ, 2008, էջ 36, 78:
2. Նույն տեղում:
3. Արնաուդյան Ա. և ուրիշներ. «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար», ԿԱԻ հրատ., Եր., 2004, էջ 16:
4. Թորոսյան Կ. և ուրիշներ «Մայրենի 3»:
5. Միքայելյան Օ. Ս. «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան», էջ 26
6. Բաբանսկի Յու. Կ., «Մանկավարժություն», Եր., Լույս, 1986:
7. Ղույունջյան Գ., «Մանկավարժություն», Գիրք 1, «Չանգակ» -97»-Եր., 2005:
8. Ղույունջյան Գ., «Մանկավարժություն», Գիրք 2, «Չանգակ» -97»-Եր., 2005:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը Արցախի տարրական դպրոցում /լիակատար /ամբողջական/ գիտելիքների ուսուցման տեխնոլոգիա/ Աննա Պետրոսյան

Հոդվածում ներկայացված են ժամանակակից կրթական համակարգի զարգացման միտումներով պայմանավորված, կրթության արդիականացմանն ուղղված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներից՝ գիտելիքների ամբողջական յուրացման տեխնոլոգիայի հիմնադրույթներից բխող դասագործընթացներ: Կրթության որակի բարձրացմանը միտված աշխատանքներից գերադասելի է մանկավարժության տեսության և պրակտիկայի կապի ապահովումը: Մշտադիտարկումների արդյունքում ձևավորված այս հոդվածի առանցքային դրույթները, անշուշտ, դյուրին, ճկուն, հետաքրքիր ու բազմաբովանդակ կդարձնեն դասերը տարրական դասարաններում:

Քանալի բառեր` կրթական համակարգ, կրթական տեխնոլոգիաներ, լիակատար (ամբողջական) գիտելիքների յուրացման տեխնոլոգիա, «ժողովուրդն իմաստուն է» թեմայի ուսուցում, ստեղծագործության հերոսներ, ստեղծագործության նպատակները, հիմնական միտքը, ստեղծագործության խնդիրներ, ենթատեքստ:

РЕЗЮМЕ

**Внедрение современных образовательных технологий
в начальной школе Арцаха
Анна Петросян**

Данная статья рассматривает учебные процессы, которые исходят из современной учебной системы и современной технологии, которые полностью помогают усвоить материал и дают соответствующие знания. Основными принципами роста учебного процесса являются система преподавания и практики. Тщательно разработанные темы способны сделать уроки интересными, понятными и содержательными для начальных классов.

***Ключевые слова:** образовательная система, образовательные технологии, технология полного усвоения материала, обучение темы “Народ-мудрый”, герои произведения, цели произведения, задачи произведения, сюжет произведения, подтекст произведения.*

SUMMARY

**The Application of Modern Teaching Technologies in Nagorno-Karabakh
Elementary Schools
/full/comprehensive/teaching technology
Anna Petrosyan**

The given article deals with educational processes that rise from modern educational system and contemporary technologies, and are aimed at securing the appropriate process of sufficient knowledge acquisition. The security of pedagogical system and practice are among the preferable means of developing the educational qualities. Themes mentioned in this article will certainly help to make the lessons flexible, interesting and sapid at the elementary stage.

***Key words:** educational system, educational technologies, the technology of full material learning, teaching “People are wise” theme, the heroes of work, the aims of the work, the tasks of the work, the subject of the work, the undertext of the work .*